ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՄԻԿՈՆ ԵՎ ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն աստղաֆիզիկոս և մաթեմատիկոս, դոկտոր, պրոֆեսոր Մամիկոն Մնացականյանի և հայ բանասեր, պատմական գիտությունների դոկտոր, ԽՍՀՄ գրողների միության անդամ, միջնադարյան գրականագետ Ասատուր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոցի հ.59 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՄԻԿՈՆ ԵՎ ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մամիկոն Մնացականյանը ծնվել է 1942թ. ապրիլի 17-ին, Երևան քաղաքում:

1962-1965թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը:

1969թ. պաշտպանել է «Ընդհանրացված հարաբերականության ընդհանուր տեսություն» թեմայով թեկնածուական թեզ:

1984թ., պաշտպանելով «Ճառագայթման տեղափոխման տեսության նոր ապարատ» թեմայով թեզը, արժանացել է ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

1975-1985թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի գիտքարտուղարը: Դասավանդել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում, 1985-1991 թվականներին եղել է տեսական աստղաֆիզիկայի լաբորատորիայի վարիչը, 1989թ.՝ պրոֆեսոր: Եղել է ԲԱ գիտական քարտուղարը, ապա ԲԱ կից մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարը, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական պրոցեսների մաթեմատիկական մոդելավորման կենտրոնի տնօրենը:

Այնուհետև, 1991թ. տեղափոխվել է ԱՄՆ և 1997թ. աշխատել է Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտում (Փասադենա, ԱՄՆ), որպես «Մաթեմատիկա» ծրագրի աշխատակից:

Մամիկոն Մնացականյանը մահացել է 2021թ. ապրիլի 12-ին, Երևանում:

Հայ բանաստեղծ, բանասեր, պատմական գիտությունների դոկտոր, ԽՍՀՄ գրողների միության անդամ Ասատուր Մնացականյանը ծնվել է 1912թ. հուլիսի 11-ին, Աշտարակի Ոսկեվազ գյուղում:

1939թ. ավարտել է Թբիլիսիի գյուղատնտեսական ինստիտուտը:

1940-1983թթ. աշխատել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

1942-1945թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին:

1930-1947թթ. ստեղծագործել է Ասատուր Շեմս գրական անունով:

1958թ. «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» թեմայով պաշտպանել է ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1964թ. «Հայկական զարդարվեստ» թեմայով պաշտպանել է ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

Ասատուր Մնացականյանը ձեռագրագետ էր և հայ միջնադարյան գրչագիր մատյաններում հաճախ էր հանդիպել բանահյուսական երգեր, որոնք զանազան գրիչների ձեռքով ներմուծվել էին հայկական ձեռագրեր, և դրանք հարկավոր էր դարձնել հայ բանագիտության սեփականությունը: Դրանց մի մասն իրենց տարբերակներն ունեին Գ.Շերենցի «Վանա սազում», «Էմինյան ազգագրական ժողովածուում», Հ.Ճանիկյանի «Հնութիւնք Ակնայ» գրքում, «Բիւրակնում»,

Ա.Տեկանցի «Հայերգում», «Ազգագրական հանդեսում» և այլուր, սակայն այդ հյուսվածքների քննական բնագրերը չկային: Այդ գործն իրականացրեց Ասատուր Մնացականյանը:

Ասատուր Մնացականյանը մահացել է 1983թ. հունիսի 27-ին, Երևանում:

Հայ աստղաֆիզիկոս և մաթեմատիկոս, դոկտոր, պրոֆեսոր Մամիկոն Մնացականյանի և հայ բանասեր, պատմական գիտությունների դոկտոր, ԽՍՀՄ գրողների միության անդամ, միջնադարյան գրականագետ Ասատուր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոցի հ. 59 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Մարո Ավետիսյանի և Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրենի կողմից:

Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ